ՀԱՎԵԼՎԱԾ 3
ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքի
ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 23-ի
116-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳՈՐԻՍ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Գորիս համայնքում սահմանվում է տեղական վճարների հետևյալ տեսակները և դրույքաչափերը՝

1. Համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

2. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված՝ շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո՝ շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

3. Ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 15.000 ՀՀ դրամ:

4. Համայնքի տնօրինության և օգտագործման տակ գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝ 10.000 ՀՀ դրամ:

5. Համաձայն ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոման համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման համար մատուցված ծառայության դիմաց՝ 3.000 ՀՀ դրամ:

6. Համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար՝

ա/ մրցույթների մասնակցության համար՝ 5.000 ՀՀ դրամ.

բ/ աճուրդի մասնակցության համար՝ 10.000 ՀՀ դրամ:

7. Համայնքի կողմից համայնքի բնակչությանը մատակարարվող խմելու ջրի մեկ խորանարդ մետրի համար գանձվող վճար՝ 100 ՀՀ դրամ:

8. Բազմաբնակարան շենքերի սպասարկման ամսական վճարի չափը, բազմաբնակարան շենքի բնակարանի ընդհանուր մակերեսի հաշվարկով, 1 քմ-ի համար 8 ՀՀ դրամ,.

9. Համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար՝ աղբահանության վճար՝

ա/ Գորիս քաղաքում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 200 ՀՀ դրամ.

բ/ Գյուղական բնակավայրերում՝ ըստ հասցեի փաստացի բնակվող յուրաքանչյուր մեկ բնակչից գանձվող աղբահանության վճար՝ 100 ՀՀ դրամ.

գ/ ըստ ոլորտների կենցաղային, ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբագոյացման չափաքանակներն համաձայն աղյուսակի /կցվում է հավելված 3-ի աղյուսակը/:

10. Համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին՝ շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար՝ աղբահանության վճար՝

ա/ ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ 500 ՀՀ դրամ

բ/ ըստ զանգվածի՝ մեկ տոննա աղբի համար՝ 1.000:

11. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ փոխհատուցման վճար՝ մեկ փաստաթղթի համար՝ 1.000 ՀՀ դրամ:

12. Համայնքի կողմից իրավաբանական ու ֆիզիկական անձանց տրամադրվող հատուկ տեխնիկայի և սարքավորումների վարձակալության վճար՝

12.1 իրավաբանական անձանց՝

ա/ էքսկավատորի 1 ժամ աշխատանքի համար՝ 14.000 ՀՀ դրամ

բ/ էքսկավատորի հիդրոմուրճով 1 ժամ աշխատանքի համար՝ 22.000 ՀՀ դրամ

գ/ գրեյդերի 1 ժամ աշխատանքի համար՝ 15.000 ՀՀ դրամ

դ/ մինիամբարձիչի 1 ժամ աշխատանքի համար՝ 10.000 ՀՀ դրամ

ե/ բեռնատարով 1 կմ բեռնափոխադրման համար՝ 1.000 ՀՀ դրամ

12.2 ֆիզիկական անձանց՝

ա/ էքսկավատորի 1 ժամ աշխատանքի համար՝ 12.000 ՀՀ դրամ

բ/ էքսկավատորի հիդրոմուրճով 1 ժամ աշխատանքի համար՝ 20.000 ՀՀ դրամ

գ/ գրեյդերի 1 ժամ աշխատանքի համար՝ 13.000 ՀՀ դրամ

դ/ մինիամբարձիչի 1 ժամ աշխատանքի համար՝ 8.000 ՀՀ դրամ

ե/ բեռնատարով 1 կմ բեռնափոխադրման համար՝ 1.000 ՀՀ դրամ

13. Տիկնիկային թատրոնի ներկայացման վճար՝

ա/ մինչև 30 րոպե տևողությամբ ներկայացումների համար՝ մեկ անձի համար 250 ՀՀ դրամ

բ/ 30 րոպեից ավել՝ մեկ անձի համար 400 ՀՀ դրամ